ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<16>> Հոկտեմբերի 2023թ. N ՄՈ/ 607 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N878-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշպատակազմին վերապահված գործառույթների իրականացման նպատակով.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գործառույթներն իրականացնող փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 16.10.2023 16:35:16 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ ա վ ե լ վ ա ծ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2023 թվականի Հունվարի ի 16-ի
N ՄՊ/60Ն-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈՐՁԱԳԵՏԻ

1. Փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները

Փորձագետը ներգրավվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գործառույթներն իրականացնելու նպատակով:
Փորձագետի կողմից իրականացվող գործառույթներն են՝

- Աշխատակազմի ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություններից եռամսյակային և տարեկան ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ընդունման, ստուգման, ըստ ծրագրերի ամփոփման և վերլուծության աշխատանքների իրականացում
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1481-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգով հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցների ու նորմատիվների հաստատման նոր ընթացակարգի հետ կապված գործառույթների իրականացում.
- մարզի համայնքներում տարբեր ֆինանսավորման աղբյուրներով իրականացվող սուբվենցիոն ծրագրերի մշակման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման ոլորտներին առնչվող փաստաթղթերի պատրաստմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն:

2. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգավվում է մեկ ամիս ժամկետով:

3. Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գործառույթների իրականացում:

4. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետը

Փորձագետը ներկայացնում է հաշվետվություն աշխատանքների իրականացման ավարտին:

5. Աշխատանքների գնահատման չափանիշները

Աշխատանքը գնահատվում է ներկայացված հաշվետվության հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները

Աշխատանքների գնահատման արդյունքները ամփոփվում են հաշվետվության ներկայացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Աշխատանքը կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները

1. Տնտեսագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
2. Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
3. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

16.10.2023

VERIFIED OCSP 16.10.2023 15:32:38 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023